

մայեցեք: 25 Եւ յաղագս որդւոցն իւրոց այսպէս ասէր, թէ «Որ ի Զայս¹ Պարսիկ Է՝ զամենեսեան կապանաւք յամուր բերդս դնեմ, մինչեւ հարկաւ արքայն զիմ որդիսն ի բաց արծակիցե՛ք»: 26 Յորս կալաւ² արս սակաւս ի Պարսկաց, առ վայր մի կապեաց. եւ յորժամ ինքն նենգաւորութեամբ զմերոյ կորստեան խորհուրդ ի միտ արկեալ տարաւ ի գլուխ՝ ապա զնոսա ի բաց արծակեաց: 27 Նամականի արարեալ առ կայսր եւ առ այլ աւագանի դրանն եւ առ սպարապետն Անտիոքայ. եւ զՎահան Ամատունի եւ զայլս ի նախարարացն յիւրաքանչիւր տոհմէ ի Զոռոմս արծակեաց. եւ զՎարդան եւ զմեզ զնդաւ յԱղուանս ի կռիւ գումարեաց. եւ ինքն յանգգայս³ մեզ նենգեալ⁴ յայս չար մղեաց. եւ զայնպիսի պիտանի զծեր ծառայ սպան, եւ այնչափ բազմութեան Պարսից եւ Զայոց կոտորածի եւ աշխարհին կորստեան եղեւ պատճառ: 28 Եւ արդ՝ ինքն զարդարեալ աւադիկ որպէս գարեգործ նստի ի միջի ձերում անհոգութեամբ: 29 Բայց դուք զնամականին զամենայն, զոր գրեալ եւ կնքեալ Է առ կայսր եւ առ ամենայն աշխարհին⁵ Զոռոմոց եւ կամ առ այլս բազումս՝ տեսանել հրամայեցեք զայն եւ որպէս ձեզ Արեաց կամ Է՝ հրաման տուեալ կատարեցեք ի վերայ մեր: 30 Չի ուր գրեալք եւ կնքեալք ի միջի են, որպէս ձեր արդարութիւնդ խնդրե՛ք⁶, աւելորդ բանից եւ շատախաւսութեան պետք անդ ոչ են»:

31 Եւ լուեալ զայս ամենայն կարգաւ ի Կամսարականէն Արշաւրայ արքային Պարսից եւ ամենայն աւագանւոյն դրանն, տեսեալ եւ զնամականին⁷, զոր գրեալն էր Վասակայ Սիւնեաց տեառն, եւ ի վերայ հասեալ՝ մեծապէս հիացեալ թագաւորն Յագկերտ եւ ամենայն իշխանք դրանն զարմացան:

Խ2. Յայնժամ յառաջ կոչեցեալ թագաւորին զիշխանն Սիւնեաց Վասակ՝ սկսաւ սաստիկ եւ առաւելապէս զայրացեալ սրտիւ խաւսել ընդ նմա եւ ասել. «Է արդարեւ լուեալ մեր զայդ ամենայն նենգաւոր իրս քո եւ զարարուածս. բայց արդ ա՛ղէ ասա՛. զի՞նչ խորհելով եւ կամ ո՞րպիսի ինչ զմտաւ ածեալ զայդպիսի⁸ իրս վնասից իշխեցեր ձեռնարկել եւ գործել. քանզի դու էիր իշխան եւ գլուխ աշխարհին Զայոց. նախ քաջալերել բանիւ զմարդիկն, զոր եւ նամակացն գրելոց ի քէն, զոր տուեալ մեր կարդալ՝ ստուգութեամբ տեղեկացաք⁹. երդմնեցուցեալ զվաստակաւոր եւ զայնպիսի պիտանի ծա-

1 ՏՏ. Եթէ ոք ի Զայս

2 ԲԳտ. ուղղագրել էին յորոց կալաւ. այսպէս ըստ ՁԱտ. (Յորս=ի բերդս)

3 Գտ. յանգգայ

4 ՏՏ. զմեզ նենգեալ

5 Ձ. աշխարհին

6 ՏՏ. չիք խնդրէ

7 ՏՏ. տեսեալ զնամականին

8 Ձ. յայդպիսի

9 Ձ. տեղեկացեաք